ՆՅՈՒԹԵՐ ՎԱՂԱՐՇԱՊԱՏԻ ՀՅՈՒՍԻՍ-ԱՐԵՎԵԼՅԱՆ ԴԱՄԲԱՐԱՆԱԴԱՇՏԻՑ

Ժ. Դ. ԽԱՉԱՏՐՅԱՆ, Ռ. Մ. ԹՈՐՈՍՅԱՆ

1974 թ. ամռանը Երևան—Էջմիածին ճանապարհի ձախ կողմում, Զվարթ-նոցի պետական տնտեսության գոմերի մոտ, ջրի խողովակի համար խրամուղի փորելիս, մակերեսից 80—110 սմ խորության վրա հայտնաբերվել են դամբարաններ, որոնք անզգուշության հետևանքով ավերվել էին։

Տեղում ուսումնասիրությունները պարզեցին, որ այստեղ եղել են երեք տեսակի թաղումներ՝ սալարկղային, կարասային և կավե դագաղ-սարկոֆագներով, որոնք պատկանում են Վաղարշապատ քաղաքի հյուսիս-արևելյան այն դամբարանադաշտին, ուր 1920-ական թվականների վերջերին և 1930-ական թվականների սկզբներին պեղվել են I—IV դդ. պատկանող հինգ տիպի թաղումներ[1]*։*

Մնացորդներից երևում է, որ սալարկղային դամբարանները պատրաստված են եղել տուֆե տարբեր չափերի սալերից, կարասային թաղումները (բարձր. մոտ 1 մ) նման են Արտաշատում և Գառնիում հանդիպող մ. թ. I—III դդ. սուր նստուկով կարասներին։ Կավե դագաղների մասերը դեռևս գտնվում էին տեղում և ունեին տարբեր ուղղություններ։

Բոլոր դագաղները ծածկված էին երեք կավե տախտակներով, որոնց վրա լցված էր 5—15 սմ հաստությամբ ավազախառը հող, իսկ վրայից դրված էր 5—10 սմ հաստությամբ տուֆե սալեր (տախտ. $I_{1,2}$, $III_{1,2}$)։

Կավե դագաղներից առաջինի ուղղությունը արևելքից արևմուտք էր, քիչ շեղումով դեպի հարավ-արևելք, հյուսիս-արևմուտք (երկար. 192 սմ, խոր. 27 սմ, լայն. գլխի կողմում 52 սմ, ոտքերի մասում 32 սմ)։ Դագաղի դեպի դուրս լայնացող պսակը եզրին ունի մատով արված, ատամնաձև զարդ։ Դամբարանում գտնվել են նաև փորագիր զարդերով մի ափսե, ապակե թելերով զարդարված միկանթանի չորս սրվակ և մի սրաքար[2]*։*

Կավե դագաղներից երկրորդի ուղղությունը արևելքից արևմուտք էր (երկար. 160 սմ, խոր. 29 սմ, լայն. գլխի մասում 45 սմ, ոտքերի մոտ 30 սմ)։ Ի տարբերություն նախորդի, սա ունի աստիճանաբար լայնացող կլորավուն պսակ, իսկ կավե տախտակների վրա գծված են հավասարաթև խաչեր (տախտ. I_1, III_1)։ Դագաղի ծածկի կավե և տուֆե սալերի միջև, հողի լիցքում, հայտնաբերվեցին ապակյա ութանկյուն երկու շիշ, քիչ ուռուցիկ, տանձաձև իրանով մի սրվակ, անկանթ և երկկանթանի, ուռուցիկ իրանով երկու փոքրիկ սրվակ, ձգված իրանով, ապակե թելեր պարուրաձև փաթաթված միկան-

---

1 Թ. Թորամանյան, Նյութեր հայկական ճարտարապետության պատմության, հ. 2, Երևան, 1948, էջ 269—276, Ա. Քալանթար, Վաղարշապատի պեղումները, Երևան, 1935, էջ 16—18, 36—63։

2 Նյութերի մի մասը նախքան մեր այցելությունը տարվել էր Էջմիածնի գավառագիտական թանգարան։

թանի սափորիկ, ոլորած պոչով բրոնզե մի թիակ, կավե ճարմանդ, օվալաձև. տափակ վահանով բրոնզե մատանի[3]։

Դագաղներից երրորդը նման է երկրորդին, որի ուղղությունը հյուսիսից հարավ էր, քիչ շեղումով դեպի հյուսիս-արևելք, հարավ-արևմուտք (երկար. 164 սմ, լայն. գլխի մասում 53 սմ, ոտքերի մոտ 42 սմ, բարձր. 30 սմ)։

Այսպիսով, կավե դագաղները նույնն են, ինչ որ նախկինում պեղված-ները, ուստի պետք է ենթադրել, որ հանգուցյալները թաղված են եղել մեջքի վրա։

Կարասային թաղումները նորություն չեն Հայաստանի համար, դրանք գալիս են դեռևս ուրարտական շրջանից։ Ուրարտական և վաղ հայկական կարասային թաղումները հայտնաբերվել են Արգիշտիխինիլիում[4]։ Սակայն կարասային թաղումները լայն տարածում են ստանում հելլենիստական շրջանում. իսկ մ. թ. առաջին դարերում դառնում են մասսայական։ Այդ են վկայում Արտաշատի, Գառնիի, Վաղարշապատի և Հայաստանի մյուս հնավայրերի պեղումները։

Վերջին տարիների պեղումները նոր նյութեր տրամադրեցին նաև կավե սարկոֆագների վերաբերյալ։ Հայաստանում ամենահին կավե սարկոֆագները վերագրվում են ուրարտական և հելլենիստական շրջաններին, սրանք իրենց ծավալով, չափերով ու ձևերով տարբերվում են վերոհիշյալ կավե դագաղներից։ Ուրարտական շրջանի կավե սարկոֆագ հայտնաբերվել է Օշականում[5], իսկ հելլենիստական՝ Սիսիանի[3] իշխանական դամբարանից։

Վաղարշապատի և Արտաշատի պեղումները վկայում են, որ կավե սարկոֆագները տարածում են ստանում սկսած մ. թ. III դ.։ Վաղարշապատում հայտնաբերվել են երկու տեսակ կավե սարկոֆագներ, որոնցից առաջինը վերոհիշյալ կավե դագաղներն են։ Արանք ծածկի կավե տախտակների վրա երբեմն ունենում են մատով արված ակոսավոր նշաններ (λ, +)։ Այսօրինակ կավե դագաղներ հայտնաբերվել են Արտաշատում (երկար. 150—200 սմ), որոնք նույնպես չունեն հատատոն ուղղություն, Սևանի ավազանի Լեռնակերտ գյուղում[7] (III դ. երկրորդ կես և IV դ.)։

Մյուս տեսակը, մասամբ գլանաձև, կիսակոշկանման, ոտքերի կողմում լայն անցքերով սարկոֆագներն են[8]։

Հայաստանի կավե սարկոֆագները աղերսվում են Միջագետքի[9] նույնա-

---

[3] Նյութերը հայտնաբերել է Ռ. Թորոսյանը՝ երկրորդ սարկոֆագը էջմիածնի թանգարան տեղափոխելու ժամանակ։

[4] A. A. Мартиросян, Аргиштихинили (Археологические памятники Армении, 8. Урартские памятники, вып. I, Ереван. 1974, стр. 51, 55).

[5] Հայտնաբերվել են Ա. Ա. Քալանթարյանի և Ս. Ա. Եսայանի կատարած պեղումներից։

[6] Ժ. Դ. Խաչատրյան, Դիակիզումը Հայաստանում (մ. թ. ա. II—մ. թ. III դդ.) (ՀՍՍՀ ԳԱ «Լրաբեր», 1975, № 2, էջ 57, 58)։

[7] Ժ. Դ. Խաչատրյան, Ա. Ա. Քալանթարյան, Մարտունու և Վարդենիսի շրջանների անտիկ և միջնադարյան հուշարձանները (ՀՍՍՀ ԳԱ «Լրաբեր», 1972, № 1, էջ 60)։

[8] Ա. Հ. Քալանթար, նշվ. աշխ., էջ 40, նկ. 13 դ, զ։

[9] E. F. Schmidt, Persepolis, vol. II, Chicago, 1957, տախտ. 86—88; R. Ghirshman, Les fouilles de Suse 1946—1951, „Revue des arts", 1951, III, էջ 188; David and Joan Oates, Nimrud 1957: The Hellenistic settlement, Iraq, vol. XX, p. 2, 1958, pl. XXVII; Andrae W. und Lenzen H., Die Partherstadt Assur, Leipzig. 1933, Taf. 43, d, h, 45, a-f, 47, h, i; N. P. Toll, The Necropolis, The Excavations at Dura-Euro-

նման սարկոֆագների հետ։ Կավե սարկոֆագներ հայտնաբերվել են Միջին Ասիայում[10] (Դալվերզին-Թեփե), Վրաստանում[11], Ադրբեջանի տարբեր վայրերում, բայց ամենից շատ՝ Աղվանքում։ Դրանք օվալաձև են, ոչ մեծ չափերի (57—110 սմ) և պատկանում են մ. թ. ա. առաջին հազարամյակի վերջին քառորդին ու մ. թ. առաջին հազարամյակի առաջին կեսին[12]։

Անդրկովկասից հյուսիս կավե սարկոֆագներ մեզ հայտնի չեն։

Այսպիսով, կավե սարկոֆագները, ի տարբերություն կարասային թաղումների, տարածման ավելի նեղ շրջանակներ ունեն և հիմնականում ընդգրկում են Կրետե կղզին (մ. թ. ա. 1800 թ.), Միջագետքը (ուր դրանք պահպանվել են դեռևս մ. թ. ա. 2300 թ.)[13] և նրան հարող շրջանները։ Ինչպես իրավացիորեն նկատել է Աշխ. Քալանթարը, կոշկաձև սարկոֆագները Հայաստան են անցել Միջագետքից[14]։

Ուղղահայաց պատերով սարկոֆագները Հայաստան և ընդհանրապես Անդրկովկաս են թափանցել նույնպես Միջագետքից, ուրարտացիների միջոցով, քանի որ դրանք լայնորեն տարածված էին Միջագետքում և նրան հարող շրջաններում։ Կավե սարկոֆագներ արտադրող արհեստանոցներ կարող էին լինել միայն խոշոր քաղաքներում և քաղաքատիպ ավաններում, որտեղ դրանց համար վաճառահանման շուկա կար։ Այդ տեսակետից Վաղարշապատը և Արտաշատը միանգամյան հարմար էին, և այդ քաղաքներում, հավանաբար, եղել է կավե սարկոֆագների արտադրություն։ Այդ են վկայում նաև Վաղարշապատի կավե դագաղների ծածկի սալերի վրայի նշանները, որոնք, ամենայն հավանականությամբ, արտադրող արհեստանոցի[15] նշաններն են։

---

pos. Preliminary Report of the Ninth season of work 1935—1936, New Haven, London, 1946, էջ 95 և հտ., նկ. 3—5, տախտ. XXVII—XXVIII; L. Watermann, Second Preliminary Report upon the Excavations at Tel Umar, „Iraq", Ann Arbor, 1933, էջ 48, տախտ. XVI_2.

10 Г. А. Пугаченкова, Новое в изучении Дальверзин-Тепэ («Советская археология» (այսուհետև՝ СА), 1971, № 4, стр. 201, рис. 14).

11 Н. В. Хоштария, Археологические исследования Уреки («Материалы по археологии Грузии и Кавказа» (այսուհետև՝ МАГК). 1, Тбилиси, 1955; С. Макалатия, Археологические находки сел. Даблагоми и Агаяни (СА. V, 1949, стр. 269 и сл.); Л. А. Чилашвили, Городище Урбниси, Тбилиси, 1964, табл. XIX.

12 Ф. Л. Османов, Глиняные саркофаги, найденные на территории Азербайджана («Материальная культура Азербайджана» (այսուհետև՝ МКА), VII, Баку, 1973, стр. 245—249); С. М. Казиев, Историко-археологическое обследование городища Кабалы, МКА, V, Баку, 1964, стр. 47; Играр Алиев, Ф. Л. Османов, Бассейн рек Геокчай—Гирдманчай—Ахсучай в античное время (СА, 1975, № 1, стр. 194, рис. 6).

13 Г. Чайлд, Прогресс и археология, М., 1949, стр. 147.

14 Աշխ. Քալանթար, նշվ. աշխ., էջ 51 և հետ.։

15 Ռ. Ա. Տիրացյանը 1975 թ. հայ արվեստի և ճարտարապետության պրոբլեմներին նվիրված հանրապետական առաջին գիտական կոնֆերանսում կարդացած «Հին Վաղարշապատի քաղաքաշինական կառուցվածքի և տեղադրության հարցի շուրջը» (Թեզեր, Երևան, 1975, էջ 18—19, 42—44) զեկուցման մեջ այն կարծիքն հայտնեց, որ երկրորդ դագաղը վաղ քրիստոնեական շրջանի է, որովհետև ծածկի կավե տախտակի վրա խաչաձև նշան կա։ Մեր կարծիքով, գա քիչ հավանական է, որովհետև ա) այդ դեպքում ինչպես բացատրել նախկինում հայտնաբերված կավե դագաղների տախտակի վրայի նույն եղանակով արված ∧ նշանները, բ) եթե հարազատները ցանկացել են շեշտել հանգուցյալի քրիստոնյա լինելը, ապա ինչո՞ւ են նրա հետ դրել ապակե սրվակներ և այլ իրեր՝ հեթանոսական սովորության համաձայն, գ) քրիստոնեական գերեզմաններն ունեն խստորեն պահպանվող որոշակի ուղղություն՝ դեմքով դեպի արևելք, կավե դագաղները որոշակի ուղղություն չունեն, իսկ երկրորդ դագաղի ուղղությունը հակառակն է։



Sur. II

Կավե սարկոֆագները չի կարելի կապել որոշակի էթնիկ խմբերի և կրոնական հավատալիքների հետ։ Դրանք առաջացել են քարաղուրկ շրջաններում, նպատակահարմարությունից ելնելով։ Հայաստանում կավե սարկոֆագներ հանդիպում են թաղման մյուս ձևերի հետ միասին և դրանց ուղեկցող նյութերը ոչնչով չեն տարբերվում սալարկղային, հիմնահողային կամ կարասային թաղումներում հանդիպող նյութերից։

Վաղարշապատի դամբարանադաշտից գտնված միակ խեցեղեն անոթը միկանթանի, նեղ բերանով գավաթն է (տախտ. I7)։ Դժբախտաբար, հայտնի չէ, թե ստ որ դամբարանից է հայտնաբերվել։ Այն պատրաստված է բաց դարշնագույն, մանրահատիկ կավից, իրանը տանձաձև է և ավարտվում է շեփորաձև վզով։ Իրանի ուռուցիկ մասում ունի թմբիկներից կազմված երեք շարք գոտի, որն արված է նախքան թրծելը, ներսից փայտիկով ճնշելու միջոցով։ Մեկ և երկու կանթով նման անոթներ այս տարածքից հայտնաբերվել են նաև անցյալում[16]։ Այդպիսիք գտնվել են՝ Գառնիի № 14 և № 72 դամբարաններից, որոնցից առաջինը պատկանում է մ. թ. I—II դդ.[17], երկրորդը՝ II—III դդ., Թալինի շրջանի Աշնակ գյուղի II դ. դամբարանից[18] և այլ վայրերից[19]։ Ձևով և զարդանախշերով հար և նման երկկանթանի կճուճներ մեծ քանակությամբ հայտնաբերվել են նաև Վրաստանում՝ Մցխեթում[20], Սամթավրոյում[21], Տետրիցկարոյի շրջանում[22], Հարավային Օսեթիայում[23], որոնք վերաբերում են մ. թ. I—III դդ.։ Այդ ձևերը և զարդերը խորթ չեն նաև Մինգեչաուրում և Սովետական Ադրբեջանի մյուս հնավայրերում հայտնաբերված առաջին դարերի խեցեղենի համար[24]։

Վաղարշապատի դամբարանադաշտից գտնված կավե գավաթի պատրաստման ժամանակը որոշելու համար շատ կարևոր են Արտաշատի պեղումները, որը շերտագրական հստակ պատկեր ունի։ Սակայն գավաթի այդ ձևը Արտաշատում տարածված չի եղել, քանի որ առ այսօր որևէ այլ օրինակ չի հայտնաբերվել։ Այդ տեխնիկայով մեծ վարպետությամբ պատրաստված միակ անոթը մի քրեղան է, որը գտնվել է II—III դդ. խեցեղենի հետ միասին։

---

16 Պատմության Պետական թանգարան (այսուհետև՝ ՊՊԹ), № 766/100։

17 Б. Н. Аракелян, Гарни, I, Результаты раскопок 1949—1950, Ереван, 1951, стр. 47, рис. 37; Гарни, II, Результаты раскопок 1951—1955 гг. (античный период), Ереван, 1957, табл. IX; Г. А. Тирацян, Опыт периодизации истории материальной культуры древней Армении (VI в. до н. э.—III в.н.э.) (ՀՍՍՀ ԳԱ «Տեղեկագիր», (Հաս. գիտ.), 1957, № 2, стр. 36).

18 Р. В. Кинжалов, Ашнакский могильник («Труды Гос. Эрмитажа», т. V, Л., 1961, стр. 5 (Кз—6263), стр. 56, 58).

19 ՊՊԹ, №№ 186, 1384։

20 О. Лордкипанидзе, Ремесленное производство и торговля в Мцхета в I—III вв. н. э. («Труды Тбилисского Гос. университета», т. 65, Тбилиси, 1957, рис. 1); А. М. Апакидзе, Г. Ф. Гобеджишвили, А. Н. Каландадзе, Г. А. Ломтатидзе, Мцхета, I, Тбилиси, 1958, стр. 151, табл. CIX, 2.

21 Г. А. Ломтатидзе, Археологические раскопки в Мцхета, Тбилиси, 1955, стр. 64.

22 К. Д. Квижинадзе, Памятники античного периода Тетрицкаройского района (МАГК, V, Тбилиси, 1973, табл. 1, 5).

23 Б. В. Техов, Очерки древней истории и археологии Юго-Осетии, Тбилиси, 1971, рис. 99.

24 С. М. Казиев, Альбом кувшинных погребений, Баку, 1960, табл. $VI_{2, 3, 6, 8}$ $X_{4, 7}$, XVIII_{6}.

1
2
3
4
5
6
7
8
9
10
Табл. III

Ինչպես տեսնում ենք, վերոհիշյալ ձևը տարածված է եղել միայն Անդրկովկասում։ Ուստի, մեր կարծիքով, այն անդրկովկասյան տիպ է և III դ. շուտ հանդես գալ չէր կարող։ Հիշյալ զարդաձևը Հայաստանի և Անդրկովկասի խեցեգործության ու ապակեգործության մեջ կիրառվում է սկսած II դ.։ Հետևաբար, ամենայն հավանականությամբ, ինչպես Վաղարշապատի, այնպես էլ մյուս հնավայրերի այդօրինակ անոթները կարող են պատկանել II—III դդ.։

Երկրորդ սարկոֆագից գտնվել է սպիտակ քարե մի ճարմանդ (տախտ. III_7)։ Քարե և ապակե ճարմանդները Հայաստանում գալիս են հելլենիստական շրջանից և հարատևում են մինչև միջին դարերը։ Այդպիսի ճարմանդներ շատ են հայտնաբերվել Գառնիի, Արտաշատի և այլ վայրերի անտիկ շրջանի դամբարաններից։ Վաղարշապատի № 1 դամբարանից գտնված մարմարատիպ կարծր քարից պատրաստված սրաքարը օգտագործելուց բավական մաշվել է (տախտ. II_9)։ Արտաշատի և Գառնիի անտիկ դամբարաններում սրաքարերը հաճախակի հանդիպող նյութերից են։ Ուշադրության արժանի է նաև բրոնզե, քառանկյուն ոլորած պոչով թիակը, որն օգտագործվել է սրվակներից օծանելիքներ հանելու և բժշկության մեջ դեղեր սարքելու համար (տախտ. III_{10})։ Այն Գառնիի և Արտաշատի հելլենիստական շրջանի թիակներից տարբերվում է իր բերանի քիչ ակոսավոր ձևով։ Թիակները ևս անտիկ աշխարհի տարածված իրերից են։

Դամբարաններում առավել շատ հանդիպող նյութերից են ապակյա անոթները։ Հետաքրքրական է № 1 սարկոֆագից գտնված փոքր ափսեն։ Այն պատրաստված է կաթնավուն, խամրած, հաստ ապակուց, ունի օղակաձև ոտք, իսկ վերին մասը թերի է։ Ափսեի մակերեսին, դրսից, փորագրելու և հղկելու եղանակով պատկերված են գծեր, շրջաններ, օվալաձև զարդեր, բրնձաձև ակոսներից կազմված գոտի և սուր, նեղ ակոսներից կազմված իրար հատող փնջեր։ Դժբախտաբար, դժվար է վերականգնել ափսեի ամբողջական պատկերը, սակայն պահպանված մասերը ցույց են տալիս, որ այն ունեցել է շատ հարուստ տեսք (տախտ. $II_{3,5,6,7}$)։

Սառը մշակմամբ՝ հղկելու և փորագրելու եղանակով, հարդարված անոթներ հայտնաբերվել են Հայաստանի տարբեր հնավայրերից՝ Դվինից, Գառնիից, Հացավանից, սակայն Վաղարշապատի ափսեի զարդերն ավելի մոտ են Գառնիի օրինակներին[25]։ Տարբեր դիրքերով արված շրջանաձև և օվալաձև զարդեր կան նաև Գառնիի գրաֆինի մակերեսին, սակայն այստեղ ուշագրավն այն է, որ ափսեի խամրած ապակին նման է գրաֆինի ապակուն։

Հղկված ապակու հարցը անտիկ աշխարհի ապակեգործության վիճելի խնդիրներից է։ Նրա ծագման ու տարածման[26] շուրջ նույնպես տարակարծու-

---

[25] «Гарни», II, рис. 37, Բ. Ն. Առաքելյան, Գ. Ա. Տիրացյան, Ժ. Դ. Խաչատրյան, Հին Հայաստանի ապակին (I—IV դդ.), Հայաստանի հնագիտական հուշարձանները, № 3, Հին դարաշրջանի հուշարձաններ, պրակ 1, Երևան, 1969, ԷԷ 72, 76, 77, 78, 151։

[26] Ch. W. Clairmont, The Glass vessels, The Excavations at Dura-Europos. Final Report IV, pl. V, New Haven, 1963, էջ 56 և հտ., տախտ. III—IX; P. Hamelin, Cahiers de Byrsa. II, 1952; R. W. Smith, Glass from the Ancient World, New York, 1957, էջ 110 և հտ.; D. B. Harden, Roman Glass from Karanis, Ann Arbor, 1936, էջ 101—103, ԷԷ 311—323; Н. П. Сорокина, Стекло из раскопок Пантикапея, 1945—1959 гг. («Материалы и исследования по археологии СССР» (այսուհետև՝ МИА), № 103, М., 1962, стр. 232).

բյուններ կան, որովհետև այդօրինակ ապակի արևմուտքում ավելի շատ է հայտնաբերվել, քան Արևելքում։ Սակայն փորագիր ապակու գյուտերը Դուրա-Էվրոպոսում (50 կտոր) և Բեգրամում հարցին նոր մոտեցման հնարավորություն ընձեռնեցին։ Բեգրամի և Դուրա-Էվրոպոսի ապակին լրացնում են մեկը մյուսին, որովհետև Բեգրամում այն գտնվել է թագավորական պալատի սրբատեղիում և աչքի է ընկնում շքեղությամբ, ձևերի բազմազանությամբ ու զարդերի հարստությամբ, իսկ Դուրա-Էվրոպոսինը գտնվել է մասնավոր տներում, սովորական վայրերում, այդ պատճառով էլ հասարակ է ու համեստ։

Փորագիր ապակու հայրենիքը Ալեքսանդրիան է, որտեղից այն տարածվել է Միջագետք, ուր փորագրության արվեստը, հենվելով հին ավանդների վրա, ավելի զարգացավ և պարզ ձևերի կողքին հանդես եկան սուավել բարդերը[27]։ II դ. սկզբից այդ տեխնիկան արագորեն տարածվում է հռոմեական կայսրության արևմտյան մարզերում և հասնում կատարելության։

Վաղարշապատի ափսեի զարդերը շատ են հանդիպում III դ. նույն եղանակով զարդարված անոթների վրա[28]։ Դրանք մեծ ընդհանրություններ են հանդես բերում Դուրա-Էվրոպոսի[29] (որոնք թվագրվում են մինչև 256 թ.) և ընդհանրապես արևելյան ծագում ունեցող անոթների զարդերի հետ։ Այս փաստը, ինչպես նաև խամրած ապակու նմանությունը Գառնիի III դ. թվագրվող հղկված ապակուն թույլ են տալիս Վաղարշապատի ափսեն համարել III դ. վերջի արտադրանք։

Մեծ հետաքրքրություն են ներկայացնում հիշյալ դամբարանից գտնված և նույն ապակով պատրաստված, տարբեր չափերի միկանթանի չորս սափորիկները, որոնք վատ են պահպանվել։ Սրանցից առաջինն ունի ձգված իրան, շեփորաձև պսակ, օղակաձև ոտք։ Կանթը մի ծայրով կպած է շրթին, մյուսով հենված ուսին (տախտ. II_1)։ Երկու ծայրերն էլ ելուստավոր են, իսկ դրսից ունի միջնաջիղ (պսակի տրամ. 5,2 սմ, հատ. տրամ. 3,2 սմ)։ Վզի ցածի մասում խառը ձևով փաթաթված է ապակյա բարակ թել։ Ուռուցիկ մասում կսմթելու եղանակով և ապակյա թելերով արված է երկու ալիքաձև գոտի, որոնք իրար կպած ծայրերի պատճառով ունեն անկանոն, ծվածիր տեսք։ Նույն ձևն ու տեսքն ունի նաև երկրորդ սափորիկը (տախտ. II_4, պսակի տրամ. 4,5 սմ)։ Երրորդը սրանցից տարբերվում է միայն վզին փաթաթված զարդերով, որոնք սկսվում են ուղղակի պսակի տակից (տախտ. II_2, պսակի տրամ. 5,8 սմ է)։ Չորրորդի հարդարանքը քիչ այլ է (տախտ. II_8)։ Սրա կանթը մի փոքր ավելի տափակ է և երկու ծայրերը ավելի ձևավորված են, իսկ ապակու

---

[27] A. Von Saldern, Glass finds at Gordion, Journal of Glass Studies (այսուհետև՝ JGS), I, 1959, էջ 22—49; G. D. Weinberg, Hellenistic Glass Vessels from the Athenian Agora, Hesperia XXX, № 4, 1961, էջ 380—392; P. Hamelin, Cahiers de Bursa, II, 1952, էջ 24։

[28] Н. П. Сорокина, Стеклянные сосуды из Танаиса («Древности нижнего Дона», М., 1965 рис. 4—7); Е. М. Алексеева, Т. М. Арсеньева, Стеклоделие Танаиса (СА, 1966, № 2, рис. 3); Н. П. Сорокина, Стекло из раскопок Пантикапея 1945—1959 гг. (МИА, № 103, М., 1962, рис. 16, 3); ее же, Стеклянный сосуд из нижнего Поднестровья («Краткие сообщения Института археологии» (այսուհետև՝ КСИА), № 89, 1962, рис. 39, 40); В. Высотская, Поздние скифы в Юго-западном Крыму, Киев, 1972, рис. 41.

[29] Ch. W. Clairmont, նշվ. աշխ., նկ. 298—306։

թելը սպիրալաձև փաթաթած է պսակից մինչև հատակ (պսակի տրամ. 3,4 սմ, բարձր. 11,5 սմ):

Ապակե սափորիկների այս յուրօրինակ խմբի ուղղակի զուգահեռներ մեզ հայտնի չեն։ Սակայն ձևերի և զարդերի ընդհանրություններ ունեցող անոթներ հանդիպում են արևելյան արտադրանքում։ Պետական էրմիտաժում պահվող, մ. թ. IV դ. մի քանի անոթներ սրանց նման են իրենց դարդերով և շեփորաձև վզով (1820/1052, 1909/101), ձևով ու կանթով (1820/807, 1820/470, 1820/434) և այլն։ Ընդհանրապես թելերով հարդարելու եղանակը հայտնի է դեռևս մ. թ. I դ., սակայն դրանք պարուրաձև փաթաթված շատ պարզ ձևեր են։ II դ. սկսում են թելերով ավելի բազմաղան ու բարդ զարդեր անել (գիգզագաձև, ալիքաձև, ցանցաձև, պարուրաձև և այլն)։ Այդպիսի մեկ և մի քանի դույնի թելերով հարդարված անոթներ հայտնաբերվել են ինչպես Հայաստանում[30], այնպես էլ անտիկ աշխարհի մյուս հնավայրերում։ Այս եղանակը կատարելության հասավ այսպես կոչված օձազարդ անոթներում, որոնց արտադրության հիմնական ժամանակը մ. թ. II դ. երկրորդ կեսից III դ. է։ Վաղարշապատի սափորներից երեքը հարդարված են թելերով՝ զարդերի զուգորդմամբ։ Հատկապես ուռուցիկ մասի զարդը հանդես է գալիս շատ ավելի ուշ՝ III դ. երկրորդ կեսին, և տարածում է ստանում IV դ.։ Այդ եղանակով և նման զարդերով հարդարված սափորները թվագրվում են III դ.[31]։ Հիշյալ սափորներն իրենց ձևերով պատկանում են անցումային շրջանին։ Այսինքն՝ նրանց ձգված տեսքը, օղակաձև ոտքը, կանթի ձևը, շեփորաձև վիզը բնորոշ են III—IV դդ.։ Հետևաբար, սափորների այս խումբը կարելի է համարել III դ. վերջի արտադրանք։

Չորրորդ սափորի պսակից մինչև հատակը փաթաթված զարդերը, ինչպես վերը նշեցինք, հայտնի են մ. թ. I դ., սակայն սափորի ձևը բնորոշ է ուշ անտիկ շրջանի ապակյա արտադրանքին։ Ձևով, կանթով և հարդարանքով ճիշտ այդպիսի միկանթանի սրվակ հայտնաբերվել է Վրաստանում (Մարթազիից)[32], այն թվագրվում է II—III դ.։ Ձևով և զարդերով III—IV դդ. պատկանող նման սափորներ հայտնի են մի շարք հնավայրերից[33]։

Այսպիսով, չորրորդ սափորը ևս պատկանում է III դ. վերջին։ Ինչպես վերը նկատեցինք, և՛ սափորները, և՛ հղկած զարդերով ափսեն, պատրաստված են միևնույն ապակուց, ուստի, հնարավոր է, որ դրանք բոլորն էլ արտադրվել են նույն արհեստանոցում, հավանաբար III դ. վերջերին։ Վաղարշապատի անոթների յուրօրինակությունը և զուգահեռների բացակայությունը թույլ են տալիս ենթադրելու, որ այդ անոթները պատրաստվել են կամ Արևմտյան Հայաստանի մեջ անհայտ ապակեգործական արհեստանոցում, կամ հենց Վա-

---

30 «Հին Հայաստանի ապակին», №№ 85—89։

31 «Художественное стекло», Л., 1967, рис. 22.

32 М. Н. Сагинашвили, Погребение из Мартазы («Вестник» Гос. Музея Грузии. XXVII-В, Тбилиси, 1967, стр. 104, табл. II_5).

33 М. М. Кобылина, Раскопки некрополя Тиритаки в 1934 г. (МИА, № 4, М.—Л., 1941, стр. 84, рис. 123); Benkö Andrea, Régészeti Füzetek, Magyar Nemzti Múzeum Förténeti Múzeum, 1962, տախտ. $XVI_{3,5}$; Kunisch Norbert, Neuerworbene Antike Gläser der Antikenabteilung der Staatlichen Museen Berlin. Archäologischer Anzeiger 1967, Heft 2, Berlin, 1957, նկ. 24; Cl. Isings, Roman Glass from Dated finds. Groningen, Djakarta, 1957; № 120 a; A. Kisa, Das Glas im Altertum, I, Leipzig, 1908, էջ 426, 427, նկ. 98։

զարշապատում։ Դժբախտաբար, մինչ այժմ հայտնաբերված հնագիտական նյութերը դեռևս հնարավորություն չեն ընձեռում ամբողջությամբ ուսումնասիրելու Վաղարշապատի ապակեգործությունը, որի գոյությունը և՛ գրավոր աղբյուրներով, և՛ հնագիտական նյութերով հաստատված է։

Այս առումով երկրորդ դամբարանի ապակյա անոթները նույնպես շատ ինքնատիպ են ու հետաքրքիր։ Դրանցից ուշագրավ են ութանիստ շշերը, որոնք պատրաստված են կապտականաչավուն երանգի նուրբ, թափանցիկ ապակուց՝ կաղապարի մեջ փչելու եղանակով (տախտ. I_3, III_5)։ Կաղապարը լավ չմիացվելու հետևանքով շշերի կարը թեք է ստացվել, հետևաբար ութանկյան պատկերը ևս անհավասարաչափ է (1,7×1,4 սմ)։ Շշերի հատակին արված են անվաձև, ուռուցիկ զարդեր։ Թեև նրանց բարձրությունները տարբեր են, բայց ապակու նույնությունը, կաղապարի մեջ փչված մասի հավասարությունը և պատերի նման խախտվածությունը թույլ են տալիս ենթադրելու, որ երկուսն էլ պատրաստված են միևնույն կաղապարով։ Բարձրությունների տարբերությունը հետևանք է վզերի երկարության։ Մեկի վիզն ավելի նեղ է ու երկար (բարձր. 13,6 սմ, հատակի տրամ. 3,74 սմ, պսակի տրամ. 2,6 սմ), պսակը, վարպետի անզգուշության հետևանքով, քիչ խեղաթյուրված, իսկ վիզը մի կողմի վրա թեքված։ Մյուսի վիզը ավելի լայն է ու կարճ (բարձր. 11 սմ, հատակի տրամ. 3,7×4 սմ, պսակի տրամ. 3 սմ)։ Երկուսի ապակիներն էլ պատած են սպիտակ իռիզացիայի հետքերով։ Այս ութանկյուն սրվակների զուգահեռները նույնպես չեն գտնվել։ Մեզ հայտնի սրվակները քառանիստ են կամ վեցանիստ, ինչպես Գառնիինը։

Ութանիստ միկանթանի շիշ գտնվել է Կուբանից, Գիլյաչ գետի վերին մասից, № 26 դամբարանից (IV—V դդ.)։ Սակայն վերջինս կրկնակի մեծ է (բարձր. 26 սմ) մեր շշերից, քիչ այլ ձևեր ունի, իսկ հատակին կա հունարեն արձանագրություն[34]։ Կարճ, շեփորաձև վզով, միկանթանի ութանկյուն շիշ պահվում է Պետական էրմիտաժում (176/1404)։ II—III դդ. տասներկու նիստ ունեցող միկանթանի շիշ հայտնաբերվել է Տոմիսում[35]։

Ինչ վերաբերում է Վաղարշապատի շշերի հատակի ուռուցիկ, անվաձև զարդերին, ապա տարբեր հնավայրերից մեծ քանակությամբ հայտնի են քառանիստ և վեցանիստ, հատակին ուռուցիկ, շրջանաձև, վարդյակաձև և այլ տիպի զարդերով շշեր[36] (I—III դդ.), սակայն դրանց մեջ անվաձև զարդերով շշեր չկան։ Անոթների հատակների երկրաչափական զարդերի նշանակությունը դեռևս պարզված չէ։ Ուսումնասիրողներից ոմանք ենթադրում են, որ դրանք վարպետի կամ արհեստանոցի տիրոջ նշաններն են, իսկ մյուսները համարում են առևտրական դրոշմանիշեր[37]։ Ինչ որ է, Վաղարշապատի շշերի հատակի

---

[34] Т. М. Минаева, Археологические памятники на Р. Гиляч, в верховьях Кубани (МИА, № 23. М.—Л., 1951, стр. 297, рис. $16_{1,4}$).

[35] M. Bucovală, Vase antice de sticlă la Tomis, Constanta. № 15 (inv. 242).

[36] Н. П. Сорокина, Стеклянные сосуды из Танаиса. «Древности Нижнего Дона» (МИА. № 127, М., 1965, рис 12); Ch. W. Clairmont, The Glass Vessels, տախտ. XIV, 600—615, XV, 618—646; Moren Jean, La Verrerie en Guale, Paris, 1913, նկ. 45; Cl. Isings, նշվ. աշխ., №№ 50a-b, 51a-b; A. Kisa, Das Glas im Altertum, III, Leipzig. 1908, Formentafel E, №№ 264—270 և այլն։

[37] A. Kisa, Das Glas im Altertum, III, էջ 778; O. Vessberg, Roman Glass in Cyprus, „Opuscula Archaeologica", VII, 1952, Lund. էջ 126; Cl. Isings, Roman Glass, էջ 64; Ch. W. Clairmont, նշվ. աշխ., էջ 131—137.

պատկերները ևս մեկով ավելացնում են այդ զարդերի թիվը, սակայն հնարավորություն չեն տալիս նշված հարցը պարզելու։ Նշենք միայն, որ նման անվանի զարդերը բնորոշ են Հայաստանի հելլենիստական շրջանի գունաղարդ տափաշշերին։

Վաղարշապատի շշերը թեև իրենց ութանիստ ձևով հեռանում են անտիկ ապակու ավանդական ձևերից, սակայն մի շարք մանրամասներով (գլանաձև վիզ, դուրս ու ներս ծալված պսակ, հատակի անվանի զարդ) ամուր կապված են անտիկ ապակեգործության ավանդույթների հետ, ուստի դրանք ևս կարող են պատկանել III դ. վերջերին։ Նշված առանձնահատկությունները թույլ են տալիս ենթադրելու, որ դրանք պատրաստվել են Հայաստանում, հնարավոր է Արտաշատում կամ Վաղարշապատում։ Հայտնի է, որ կապտա-կանաչավունը I—III դդ. տեղական ապակու ամենատարածված դույներից է։

Նույն սարկոֆագից գտնված սրվակներից հաջորդը քիչ սեղմված, տանձաձև տեսք ունի։ Պատրաստված է ազատ փչելու եղանակով՝ թափանցիկ, զրեթե անգույն ապակուց (տախտ. I_6, III_3)։ Հատակը թեթևակի ներճկված է, վիզը գլանաձև, դուրս ու ներս ծալված պսակով։ Մակերեսը պատած է մանուշակագույն, սպիտակավուն խռիզացիայի ծածկույթով (բարձր. 7,4 սմ, պսակի տրամ. 2,2 սմ, հատակի տրամ. 3 սմ)։

Տանձաձև սրվակները գալիս են դեռևս մ. թ. I դ. և հարատևում են վաղ միջնադարում։ Տարբեր չափերի նման սրվակներ հայտնաբերվել են Սիրիայում, Հոմոսի մ. թ. II—III դդ. հռոմեական դամբարաններից[38]։ Վաղարշապատի սրվակը իր որոշ առանձնահատկություններով կապված է անտիկ ձևերի հետ և կարող է պատկանել III դ. երկրորդ կեսին։

Ուշագրավ են նաև երկու փոքրիկ նուրբ սրվակները։ Սրանցից մեկը պատրաստված է բաց կանաչավուն ապակուց, ազատ փչելու եղանակով, քիչ սեղմված գնդի տեսքով սրվակը ունի կարճ վիզ, դեպի դուրս լայնացող ծալված պսակ, ներճկված հատակ և երկու բարակ ձևավոր կանթ (տախտ. I_5, III_4, բարձր. 4,8 սմ, պսակի տրամ. 3,6 սմ, հատակի տրամ. 3 սմ)։ Մակերեսը պատած է կաթնավուն խռիզացիայի հետքերով։ Այս սրվակը ևս կանոնավոր ձևեր չունի և պատրաստված է բավական անփույթ։ Այն հիշեցնում է I—III դդ. կանոնավոր, գնդաձև, երկկանթանի ավելի մեծ չափերի անոթները, սակայն իր որոշ ձևերով զիջում է նրանց դասական կառուցվածքին։ Երկկանթանի այս անոթը, անշուշտ, անփորձ վարպետի ստեղծագործություն է։ Հեռավոր նմանություն ունեցող այդպիսի սրվակներ պատկանում են III—IV դդ.[39]։ Նման կանթերով այդպիսի մի անոթի բեկոր թվագրվում է II—III դդ.[40]։ Վերը բերված հատկանիշներն ու զուգահեռները թույլ են տալիս Վաղարշապատի երկկանթանի սրվակը ևս թվագրելու III դ. վերջով։

Բաց կանաչավուն ապակուց է պատրաստված նաև գ[illegible]ձև իրանով, հարթ հատակով, կարճ լայն վզով, լայնաբերան սրվակը։ Այն ունի դուրս ու

---

[38] Selim Abdul Hak, Contribution d'une découverte Archéologique Récente, Al'Etude de Verrerie Syrienne A'l'E'poque Romaine, JGS, VII. 1965, էջ 26, 27, նկ. 48։

[39] Edith Spartz, Antike Gläser, Kasel, 1967, տախտ. 37, № 65; Peter La Baume, Glas der antiken Welt, I. Köln, տախտ. 20₁,₂; Jorgu Stoian, Tomitana, Contribuţii Epigrafice la istoria cetăţii Tomis, Editura academiei Republicii Populare Romine, 1962, fig. 4.

[40] D. B. Harden and Jennifer Price, The Glass, Excavations at Fishbourne. 1961—1969, Society of antiquaries of London, № XXVII, 1971, նկ. 82։

ներս ծալված պսակ, որը տաք վիճակում ծռմռվել է (տախտ. I_4, III_9): Սրվակի մակերեսը պատած է կաթնավուն իռիզացիայի շերտով (բարձր. 4,2 սմ, պսակի տրամ. 3,2 սմ): Ի տարբերություն նախորդների, այս սրվակն իր զուգահեռներն ունի արևելյան, սիրիական և Կիպրոսի կենտրոններից[41] *գտնված III—IV դդ. ապակյա անոթների հետ, հետևաբար այս սրվակը ևս կարող է պատկանել III դ. վերջին։*

Վաղարշապատի կավե սարկոֆագներից հայտնաբերված ապակյա անոթները մեծ հետաքրքրություն են ներկայացնում ինչպես Հայաստանի, այնպես էլ ուշ անտիկ շրջանի ապակեգործության ուսումնասիրության համար։ Դրանք իրենց նոր, ինքնատիպ ձևերով հարստացնում են Հայաստանի և անտիկ աշխարհի ապակեգործության նմուշները, բացահայտում տեխնիկական հնարների հետագա զարգացումն ու շարունակումը։ Վաղարշապատի կավե սարկոֆագների ապակին կապված է անտիկ ապակու ավանդների հետ։

Այսպիսով, Հայաստանի մ. թ. I դ. մշակույթի ուսումնասիրությունը, որն սկսվել է Գառնիի և հաջողությամբ շարունակվում է Արտաշատի պեղումներով, սվելի բազմակողմանի դարձնելու համար հույժ կարևոր են Վաղարշապատի քաղաքային մասի և դամբարանադաշտի պեղումները։ Վաղարշապատը լինելով Հայաստանի անտիկ շրջանի մայրաքաղաք, եղել է նաև մշակույթի և արհեստագործության կարևոր կենտրոններից մեկը։ Ուստի, այնտեղի պեղումները հնարավորություն կտան լուծելու քաղաքաշինության, հոգևոր ու նյութական մշակույթի հետ կապված մի շարք հարցեր։ Ամենայն հավանականությամբ, Վաղարշապատը հանդիսացել է նաև III—IV դդ. Հայաստանի ապակեղենի արտադրության կարևոր օջախներից մեկը։

МАТЕРИАЛЫ ИЗ СЕВЕРО-ВОСТОЧНОГО НЕКРОПОЛЯ ВАГАРШАПАТА

Ж. Д. ХАЧАТРЯН, Р. М. ТОРОСЯН

Резюме

Летом 1974 г. в совхозе Звартноц, у фермы, во время строительных работ на глубине 80—110 *см* от поверхности земли были найдены погребения—каменный ящик, кувшинное погребение и глиняные саркофаги длиной от 160 до 192 *см*. Саркофаги закрывались тремя глиняными досками, затем покрывались слоем земли (толщ. 5 *см*) и туфовыми плитами.

В первом саркофаге найдены молочно-матового цвета кувшинчики, маленькая тарелка со шлифованными украшениями. Во втором саркофаге обнаружены восьмигранные бутылочки, амфориск, маленький колбовидный сосуд и др. Прямые аналогии стекла нам не известны, но новонайденные стеклянные изделия из Вагаршапата представляют большой интерес для изучения античного стеклоделия вообще и армянского—в частности. Глиняные саркофаги датируются концом III в.

---

[41] Selim Abdul Hak, *նշվ. աշխ.*, *նկ.* 4; D. B. Harden, The Glass, Report of the Department of antiquities Cyprus 1940—1948, Nicosia, 1958, *նկ.* 22 g; Edith Spartz, *նշվ. աշխ.*, *տախտ.* 35, № 146։